

## 1.4. Աշխատանքի շուկայի ցուցանիշներ

### 1.4.1. Ձրադրվածություն

Տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը 2001թ. հունվար-մայիսին հանրապետությունում, ըստ գնահատման, կազմել է 1429.2 հազ. մարդ, որոնց 89.4 % կամ 1277.3 հազ. մարդ զբաղված է տնտեսության մեջ, իսկ 10.6 % կամ 151.9 հազ. մարդ (միջինը ժամանակաշրջանի համար) չի ունեցել աշխատանք, գրանցվել է ՀՀ աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայությունում և ստացել գործազուրկի կարգավիճակ:

Տնտեսության մեջ զբաղված բնակչության 34.3% կամ 438.0 հազարի վերաբերյալ տեղեկությունը ստացվում է մոտ 9000 սուբյեկտներից ամսական պարբերականությամբ ստացվող վիճակագրական հաշվետվությունների հիման վրա: 2001թ. մայիսին նշված սուբյեկտներում զբաղված բնակչության թվաքանակը 2000թ. համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ նվազել է 9.3%: Այս սուբյեկտներում զբաղված բնակչության 46.1% զբաղված է եղել սոցիալական ոլորտում (առողջապահություն և սոցիալական ապահովություն, կրթություն, մշակույթ, արվեստ) 26.0%՝ արդյունաբերության մեջ, 6.7%՝ տրանսպորտի և կապի համակարգում, 4.2%՝ շինարարության մեջ, 3.0%՝ բնակարանային կոմունալ և բնակչության կենցաղսպասարկման ոլորտում, 6.0% կառավարման համակարգում, և 8.0%՝ այլ ճյուղերում:

2001թ. մայիսի վերջին ՀՀ զբաղվածության հանրապետական ծառայությունում հաշվառման կանգնած են եղել 172.9 հազար աշխատանք փնտրող քաղաքացիներ, որոնց 99.1% կամ 171.3 հազարը չզբաղված քաղաքացիներն են: Գործազուրկի կարգավիճակ է ստացել չզբաղված քաղաքացիների 86.6% կամ 148.4 հազ. մարդ:

2001թ. մայիսին վերը նշված ծառայության կողմից հաշվառման են վերցվել 1.1 հազ. մարդ, որոնցից 1.0 հազարը կամ 90.9% ստացել է գործազուրկի կարգավիճակ: Նույն ժամանակամիջոցում հաշվառումից հանվել է 3.8 հազ. մարդ, որոնցից՝ 18.4%՝ աշխատանքի տեղավորման պատճառով:

#### Աշխատուժի առաջարկն ըստ հանրապետության մարզերի, 2001թ. մայիսին\*

	Աշխատանք փնտրող քաղաքացիների թիվը		նրանցից՝ գործազուրկներ	
	ընդամենը, հազ. մարդ	%-ներով՝ նախորդ տարվա մայիսի նկատմամբ	ընդամենը հազ. մարդ	%-ներով՝ նախորդ տարվա մայիսի նկատմամբ
<b>Ընդամենը</b>	<b>172.9</b>	<b>84.9</b>	<b>148.4</b>	<b>84.7</b>
<i>այդ թվում՝</i>				
Արագածոտն	2.2	75.9	1.6	80.0
Արարատ	8.0	80.8	6.4	83.1
Արմավիր	11.0	71.0	8.4	68.9
Գեղարքունիք	10.2	78.5	7.1	77.2
Լոռի	24.5	89.1	21.2	86.9
Կոտայք	13.5	73.4	10.6	72.1
Շիրակ	33.3	96.0	29.4	94.2
Սյունիք	16.1	101.3	13.8	98.6
Վայոց Ձոր	2.1	91.3	1.8	90.0
Տավուշ	5.0	80.6	4.4	80.0
Երևան	47.0	82.0	43.7	83.4

*\*) ՀՀ զբաղվածության հանրապետական ծառայության տվյալներով*

Գործազուրկ բնակչության 95.0 % կենտրոնացված է քաղաքային բնակավայրերում, նրանցից՝ 29.4 %՝ Երևան, 18.1%՝ Գյումրի և 8.8%՝ Վանաձոր քաղաքներում:

Կանայք կազմել են պաշտոնապես գրանցված գործազուրկների 65.2%: Նրանց տեսակարար կշիռը գործազուրկների ընդհանուր թվաքանակում 2000թ. մայիսի նկատմամբ աճել է 1.5 տոկոսային կետով:

Աշխատուժի պաշտոնապես հայտարարված պահանջարկը 2001թ. մայիսին կազմել է 436 մարդ. այդ թվում՝ 72.2% կամ 315-ը՝ բանվորական մասնագիտությունների գծով:

2001թ. մայիսին աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայությունների միջնորդությամբ աշխատանքի է տեղավորվել 656 մարդ: Մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը մեկ տեղի հաշվով կազմել է 393 չզբաղված մարդ:

Նպաստառու գործազուրկների թվաքանակը 2001թ. մայիսին կազմել է 8.6 հազ. մարդ, իսկ գործազրկության նպաստի միջին չափը՝ 3397 դրամ:

Գործազրկության մակարդակը, հաշվարկած որպես զբաղվածության ծառայություններում գրանցված գործազուրկների և տնտեսապես ակտիվ բնակչության (զբաղվածներ և գործազուրկներ) հարաբերակցություն, 2001թ. մայիսին կազմել է 10.5 % և ապրիլի համեմատությամբ նվազել է 0.1 տոկոսային կետով, իսկ 2000թ. մայիսի նկատմամբ նվազել է 1.6 տոկոսային կետով: